Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
Ռեկտոր Բ. Մակիչյան

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի «21»-ի որոշմամբ (արձ. N18)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Արտաքին կապերի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Հյուսիսային համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է նպաստել համաշխարհային գիտակրթական գործընթացներին ու ծրագրերին համալսարանի ինտեգրմանը, միջազգային համագործակցության ոլորտում համալսարանի (համալսարանի համապատասխան ստորաբաժանումների) և արտասահմանյան գիտակրթական հաստատությունների, հիմնադրամների և միջազգային կառույցների հետ համագործակցության ձևավորմանը, ընդլայնմանն ու դրանց հետ կապված հարցերի համակարգմանը:

1.2 Հյուսիսային համալսարանի Բաժինն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, Հյուսիսային համալսարանի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Սույն կանոնադրության փոփոխություններն ու լրացումները իրականացվում են Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

1.4 Բաժնի վերակազմակերպումը և լուծարումը իրականացվում է Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ՝ համալսարանի ռեկտորի առաջարկով:

2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2.1 Արտաքին կապերի բաժնի աշխատանքի համակարգումը վերապահվում է համալսարանի կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորին:

2.2 Արտաքին կապերի բաժնի գործունեությունը կոորդինացնում է բաժնի պետը, որը պաշտոնում նշանակվում և պաշտոնից ազատվում է համալսարանի ռեկտորի հրամանով:

2.3 Արտաքին կապերի բաժնի հաստիքացուցակը հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից:

2.4 Բաժնի պետը կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորի ընդհանուր ղեկավարությամբ իրականացնում է արտաքին կապերի բաժնի աշխատանքների համակարգում և վերահսկում:

3. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

3.1 Բաժնի խնդիրները.

3.1.1 Համալսարանի արտաքին կապերի զարգացման ռազմավարության մշակում և իրականացում:

3.1.2 Համաշխարհային գիտակրթական գործընթացներում համալսարանի հետագա ինտեգրման գործընթացների կազմակերպման նպատակով գործընկեր համալսարանների հետ առկա համագործակցության հետագա ընդլայնում և նոր գործընկերների հետ պայմանագրերի կնքում:

3.1.3 Համալսարանի արտաքին կապերի զարգացման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված միջոցառումների՝ համատեղ գիտական և ուսումնական միջոցառումների, այդ թվում՝ միջազգային սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների և գիտակրթական ցուցահանդեսների կազմակերպում:

3.1.4 Հայրենիք-սփյուռք գիտամշակութային սերտ կապերի զարգացման գործընթացի խորացում, արտերկրից օտար և սփյուռքահայ ուսանողների՝ համալսարանի գիտաուսումնական գործընթացում ներգրավմանը նպաստում:

3.1.5 Համալսարանի դասախոսներին և ուսանողներին միջազգային տարբեր գիտական ծրագրերում ներգրավելու աշխատանքների, այդ թվում՝ դասախոսների և ուսանողների շարժունությանն ուղղված ծրագրերի կազմակերպում:

3.2 Բաժնի գործառույթները.

3.2.1 Արտաքին կապերի զարգացման ռազմավարության հետ կապված առաջարկների ներկայացում համալսարանի ռեկտորին:

3.2.2 Տարեկան աշխատանքային պլանի կազմում և տարեկան ամփոփիչ հաշվետվության ներկայացնում համալսարանի կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորին:

3.2.3 Արտերկրի կրթական հաստատությունների և գիտական կենտրոնների հետ պայմանագրերի և համաձայնագրի կնքման բանակցային գործընթացների կազմակերպում:

3.2.4 Օտարերկրյա ուսանողներ և դասախոսներ Հյուսիսային համալսարան հրավիրելու նպատակով քայլերի ձեռնարկում:

3.2.5 Միջազգային գիտակրթական ծրագրերի շրջանակներում գիտաժողովներին, ինչպես նաև փոխանակման ծրագրերի շրջանակներում, համալսարանի շահերից բխող այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով արտերկիր մեկնող մասնակիցների գործուղումների վերաբերյալ փաստաթղթերի ձևակերպում (կազմում):

3.2.6 Համալսարանի ինտերնետային կայքում (ֆեյսբուքյան էջում) և համալսարանի պարբերականում արտաքին կապերի գործունեության, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն և տեղադրում:

3.2.7 Միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների և արտերկրի համալսարանների կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի հայտերի մասին իրազեկում համալսարանի ստորաբաժանումներին և սովորողներին:

3.2.8 Համալսարանի կողմից նոր միջազգային դրամաշնորհային ծրագրերին վերաբերվող փաստաթղթերի նախապատրաստում (հայտի առաջարկի օրինակելի տարբերակի տրամադրում, երաշխավորական նամակների հատկացում), արդեն իսկ շահած դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքում կոորդինացման աշխատանքների կատարում:

3.2.9 Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների երաշխավորությամբ միջազգային գիտակրթական պայմանագրերի կողմ հանդիսացող համալսարանների և գիտական կենտրոնների հետ պաշտոնական փաստաթղթերի փոխանակում և նամակագրության վարում:

3.2.10 Օտարերկրյա քաղաքացիների հետ համալսարանում ուսումնառություն ստանալու վերաբերյալ նամակագրության վարում, համալսարանի ֆակուլտետների և ամբիոնների, գործող ծրագրերի և մասնագիտությունների ու մասնագիտացումների, ընդունելության կարգի և պայմանների մասին տեղեկատվության տրամադրում:

3.2.11 Համալսարանի արտաքին կապերի զարգացմանն ուղղված միջոցառումներին՝ միջազգային կլոր սեղաններ, գիտաժողովներ, սեմինարներ և քննարկումներ, համալսարանի մասնակցության աշխատանքների կազմակերպում:

3.2.12 Օրենքով չարգելված այլ գործառույթներ: